

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Որոշում

Գրանցման ամսաթիվ՝ 12/04/2005

Հրապարակման ամսաթիվ՝ 20/04/2005

07/04/2005 թիվ 144Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ  
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ,  
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ

S. Սարգսյան

2005 թ. ապրիլի 8  
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՅԻ  
ԹՈՂԱՐԿՎՈՂ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ,  
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՐՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (Կենտրոնական բանկ) կողմից թողարկվող պարտատոմսերի (այսուհետ՝ Պարտատոմս) թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կանոնները:
- 1.2 Կենտրոնական բանկի Պարտատոմսերը թողարկվում են ելնելով Կենտրոնական բանկի հիմնական խնդրից:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. 1 Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
- 2.1.1 Պարտատոմս՝ Կենտրոնական բանկի կողմից թողարկվող ոչ փաստաթղթային կարճաժամկետ գեղչատոկոսային պարտատոմս,
  - 2.1.2 Թողարկող՝ Կենտրոնական բանկ,
  - 2.1.3 Դիլեր՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ, որը Կենտրոնական բանկի հետ կնքել է համապատասխան պայմանագիր,
  - 2.1.4 Պահառու՝ Պարտատոմսերի թողարկման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող և Պարտատոմսերի թողարկման գրքայ հավաստագիրը պահող և հաշվառող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք: Պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաների սպասարկման նպատակով թողարկողը հանդես է գալիս որպես պահառու, իրականացնում է Պարտատոմսերով հավաստվող իրավունքների գրանցումը, համապատասխան գործարքների վերջնահաշվարկը:
  - 2.1.5 Ենթապահառու՝ պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որում հաշվառվում են ներդրողներին սեփականության իրավունքով պատկանող Պարտատոմսերը՝ ըստ առանձին սեփականատերերի:
  - 2.1.6 Ներդրող՝ պարտատոմսերի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի պարտատոմսերը հաշվառվում են Ենթապահառուի մոտ:
  - 2.1.7 Առևտրային բանկ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկ, որը չի հանդիսանում Պարտատոմսերի շուկայում Դիլեր, և որին սեփականության իրավունքով պատկանում են Պարտատոմսերը:
  - 2.1.8 Աճուրդ՝ Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման նպատակով կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որին Դիլերները ներկայացնում են հայտեր՝ Պարտատոմս ձեռք բերելու նպատակով:
  - 2.1.9 Դեպո հաշիվ՝ պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով:
  - 2.1.10 Դեպո հաշվարկներ՝ ենթապահառուների և պահառուի կողմից իրականացվող գործառնությունների բազմությունն է, որի արդյունքում իրականացվում է պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում գործարքի մասնակիցների միջև «առաքում՝ վճարման դիմաց» կամ «ազատ առաքման» սկզբունքով:
  - 2.1.11 Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ (այսուհետ՝ Համակարգ)՝ Պահառուի մոտ վարվող դեպո հաշիվներում Պարտատոմսերի

հաշվառման և Պարտատոմսերով գործարքների վերջնահաշվարկների իրականացումն ապահովող համակարգ:

### 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Սույն կարգի համաձայն թողարկված Պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պայմաններում փոփոխություններ չեն կարող նախատեսվել:

3.2 Պարտատոմսեր կարող են ձեռք բերել Դիլերները:

3.3 Պարտատոմսերի թողարկումն իրականացվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվող դրամավարկային եռամսյակային ծրագրի հիման վրա Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ, որը հիմք է հանդիսանում Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխում իրականացնելու նպատակով աճուրդ կազմակերպելու համար:

3.4 Կենտրոնական բանկի նախագահի որոշման հիման վրա տեղաբաշխումից մեկ օր առաջ Համակարգում գրանցվում են տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի թողարկման չափանիշները՝ թողարկման օրը և ժամը, հերթական համարը, թողարկման ծավալը, մարման օրը, Պարտատոմսի ձեռք բերման առաջարկության նվազագույն ծավալը, քայլը:

3.5 Պարտատոմսերի թողարկումը ձևակերպվում է գլոբալ հավաստագրով՝ համաձայն հավելված 1-ի: Աճուրդի արդյունքում չտեղաբաշխված պարտատոմսերը ենթակա են հաշվառման:

3.6 Թողարկողը Պարտատոմսերի թողարկման հայտարարությունում նշում է սույն կարգի 3.4 կետում նշված Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված պարտատոմսերի թողարկման չափանիշները:

3.7 Թողարկողը պարտավոր է ՍԻԲԻԷՅՆԵՑ համակարգի կամ այլ մասնագիտացված կապի և զանգվածային լրատվության միջոցներով թողարկման օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ հրապարակել հերթական թողարկման տեղաբաշխման մասին տեղեկատվություն՝ համաձայն հավելված 2-ի, իսկ աճուրդի անցկացման համար սահմանված ժամից առավելագույնը երկու ժամվա ընթացքում հրապարակել աճուրդի արդյունքները՝ աճուրդին մասնակցած Դիլերների թիվը, ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, աճուրդի սահմանային եկամտաբերությունը և միջին կշռված եկամտաբերությունը՝ համաձայն հավելված 3-ի:

3.8 Աճուրդի անցկացման համար սահմանված ժամից առավելագույնը երկու ժամ հետո՝ ժամը 13.00 Թողարկողը որոշում է և հայտարարում է Պարտատոմսերի տեղաբաշխման սահմանային եկամտաբերությունը՝ ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ: Սահմանված ժամին Թողարկողի կողմից աճուրդի արդյունքները չհրապարակելու դեպքում աճուրդը համարվում է չեղյալ:

3.9 Թողարկողը պարտավոր է սահմանված ժամկետներում թողարկել և ապահովել իր կողմից թողարկված Պարտատոմսերի մարումը:

3.10 Պարտատոմսերը թողարկվում են մինչև 1 տարի մարման ժամկետով: Պարտատոմսերի թողարկման պետական գրանցման համարը կատարվում է համաձայն հավելված 4-ի:

3.11 Պարտատոմսերը վաճառվում են անվանական արժեքի նկատմամբ գեղչատոկոսով և մարվում անվանական արժեքով:

3.12 Պարտատոմսերով հավաստված իրավունքների պաշտոնական ամրագրումն իրականացվում է դեպո հաշիվներում համապատասխան գրառումներ կատարելու միջոցով (այսուհետ՝ Պարտատոմսերի դեպո հաշվառում): Պարտատոմսերի դեպո հաշվառումն իրականացվում է երկու մակարդակով՝ կենտրոնական Պահառուի և ենթապահառուների մոտ դեպո հաշիվներ վարելով: Պարտատոմսերի սեփականության իրավունքը ձեռք է բերվում այդ Պարտատոմսերը Պահառուի կամ Ենթապահառուի մոտ սեփականատիրոջ անունով բացված դեպո հաշվում մուտքագրվելուց հետո: Պարտատոմսերի սեփականատիրոջը, ըստ պահանջի, տրվում է տեղեկանք Պարտատոմսերի դեպո հաշվից՝ համաձայն հավելված 5-ի:

3.13 Թողարկողը պարտավոր է յուրաքանչյուր Դիլերի տրամադրել դեպո հաշիվ/հաշիվներ: Դեպո հաշիվը հանդիսանում է առանձնահատուկ յուրաքանչյուր հաշվետիրոջ համար և պարունակում է բնորոշ կոդ (գրանցման ծածկագիր): Դեպո հաշիվն արտացոլվում է հաշվետիրոջ հետ կնքված պայմանագրում:

#### 4. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Պարտատոմսերի պահառության գործունեությունը Պարտատոմսերով հավաստվող իրավունքների գրանցման գործունեությունն է:

4.2 Պարտատոմսերով հավաստված իրավունքների պաշտոնական ամրագրումը, ինչպես նաև այդ իրավունքների փոխանցումը, վերապահումը և սահմանափակումն իրականացվում են երկմակարդակ պահառուական համակարգով՝ Պահառուի և Ենթապահառուների մոտ վարվող դեպո հաշիվների վրա պարտատոմսերի վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու ձևով (միջոցով):

4.3 Պահառուի գործառույթները կատարում է Թողարկողը, իսկ Ենթապահառուների գործառույթները՝ Դիլերները և Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերով ենթապահառուական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող իրավաբանական անձինք:

#### 5. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ: ԱՃՈՒՐԴ

5.1 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է փակ աճուրդի միջոցով: Որպես աճուրդի անցկացման ժամ սահմանվում է ժամը 11.00:

5.2 Պարտատոմսերի աճուրդին կարող են մասնակցել Դիլերները:

5.3 Դիլերը Պարտատոմսերի աճուրդին իր անունից իր հաշվին կարող է ներկայացնել մեկ հայտ՝ առավելագույնը քսան մրցակցային առաջարկությամբ՝ նշելով պարտատոմսի անվանական արժեքն ու գինը: Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն հավելված 6-ի:

5.4 Դիլերն աճուրդին մասնակցելու հայտ կարող է ներկայացնել աճուրդի անցկացման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 17.00-ից մինչև աճուրդի անցկացման օրվա ժամը 11.00-ը:

5.5 Դիլերի կողմից աճուրդի մասնակցության հայտերը ներկայացվում են էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով՝ Դիլերի մոտ տեղակայված ՍիԲիԷյնեթ համակարգի աշխատանքային կայանից, Թողարկողի կողմից սահմանված ֆորմատներով՝ համաձայն հավելված 7-ի: Դիլերից երկու կամ ավելի հայտ ստանալու դեպքում Համակարգի կողմից ընդունված է համարվում առաջինը ստացված հայտը: Համակարգ մուտքագրված հայտը չի կարող հետ կանչվել, և դրանում փոփոխություններ չեն կարող կատարվել:

5.6 Դիլերի հայտը համակարգ մուտքագրվելու պահին անմիջապես ստուգվում է Համակարգի կողմից: Աճուրդի պայմանների և/կամ առանձին հայտին ներկայացվող սահմանափակումների խախտման դեպքում հայտը մերժվում է, ինչի մասին Դիլերը տեղեկացվում է հատուկ հաղորդագրության միջոցով: Հայտը մերժված լինելու դեպքում Դիլերը կարող է մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը ներկայացնել նոր հայտ:

5.7 Եթե Դիլերը տարբեր տեսակի վճարների հետևանքով (կապի խզում, մասնակցի հսկողության ներքո գործող տեխնիկաձրագրային ապահովման անսարքություն և այլն) Թողարկողի կողմից սահմանված Համակարգով հայտն ուղարկելու հնարավորություն չունի, ապա այդ մասին

տեղեկացնում է Թողարկողի կողմից լիազորված աշխատակիցներին, և հայտը մուտքագրում է Թողարկողի մոտ տեղադրված հատուկ աշխատանքային կայանից մինչև աճուրդի սկիզբը:

5.8 Եթե աճուրդի օրվա մինչև ժամը 10.50-ը Դիլերների 30%-ը սույն կարգի համաձայն Թողարկողին տեղեկացրել են հայտերի ուղարկման անհնարինության մասին, ապա աճուրդային գործընթացը դադարեցվում է ու այդ մասին անմիջապես տեղեկացվում է Կենտրոնական բանկի նախագահին: Դիլերներին հայտարարվում է աճուրդը վերսկսելու կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ որոշումը:

5.9 Աճուրդի օրվա ժամը 11.00-ին Համակարգն ավտոմատացված եղանակով դադարեցնում է հայտերի ընդունումը:

5.10 Համակարգը ստուգում է Դիլերի դրամական հաշվում բավարար միջոցների առկայությունը: Համապատասխան միջոցների առկայության դեպքում Համակարգն ապահովում է դրանց օգտագործման սահմանափակումը հաշվետիրոջ այլ գործառնությունների համար:

5.11 Աճուրդի պայմաններից շեղումներով լրացված կամ բավարար միջոցներով չապահովված հայտերն աճուրդից հանվում են, իսկ համապատասխան Դիլերներն այդ մասին տեղեկացվում են հատուկ հաղորդագրությունների միջոցով:

5.12 Հայտերի հավաքագրման արդյունքներով կազմվում է հավաքական տեղեկագիր, որը ստորագրվում է Կենտրոնական բանկի Ֆինանսական շուկաներում գործառնությունների վարչության պետի կողմից:

5.13 Թողարկողի կողմից որոշված գնային պայմանները համակարգ մուտքագրվելուց հետո սկսվում է առաջարկությունների բավարարումը: Մրցակցային առաջարկությունների բավարարումն իրականացվում է ամենացածր եկամտաբերությամբ առաջարկություններից սկսած մինչև սահմանային եկամտաբերությամբ որոշված ծավալը: Եթե սահմանային եկամտաբերությամբ բավարարման ենթակա պարտատոմսերի ծավալը զիջում է տվյալ եկամտաբերությամբ առաջարկությունների ծավալը, կատարվում է համամասնական տեղաբաշխում, հակառակ դեպքում բավարարվում է տվյալ սահմանային եկամտաբերությամբ մրցակցային առաջարկությունների ողջ ծավալը:

5.14 Համակարգը հաշվում է տեղաբաշխվող Պարտատոմսերի ծավալն ըստ Դիլերների, ինչպես նաև Թողարկողին փոխանցվելիք դրամական միջոցները և կատարում է դրամական ու դեպո հաշիվներին համապատասխան ծավալով դրամական միջոցների և Պարտատոմսերի փոխանցումները: Դիլերի հայտի պատասխանը փոխանցվում է ՍԻԲԻԷՋնեթ համակարգի միջոցով, իսկ վերջինիս խափանման դեպքում՝ թղթային եղանակով:

5.15 Դիլերները ոչ ուշ, քան աճուրդին հաջորդող աշխատանքային օրվա սկիզբը, ստանում են քաղվածք իրենց դեպո հաշիվներից՝ համաձայն հավելված8-ի, իսկ աճուրդի ավարտից հետո՝ տեղեկատվություն հայտերի պատասխանների մասին (ՀՏ 511):

5.16 Համակարգի կամ կապուղիների երկարատև խափանման դեպքում Դիլերի կողմից հայտը կարող է ներկայացվել թղթային եղանակով՝ փակ ծրարով՝ համաձայն հավելված 9: Թղթային եղանակով ներկայացված հայտը կարող է ընդունվել մինչև աճուրդի հայտարարված ժամը: \_\_

## 6. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Պարտատոմսերի երկրորդային շուկայի մասնակիցներ են՝ Ներդրողները, Դիլերները, Առևտրային բանկերը և Կենտրոնական բանկը: Պարտատոմսերի երկրորդային շուկայի ենթակառուցվածքներն են Պահառուն և Ենթապահառուները:

Կենտրոնական բանկը հաշվառման ենթակա չտեղաբաշխված պարտատոմսերը կարող է օգտագործել հակադարձ ռեպո գործառնությունների իրականացման նպատակով:

6.2 Պարտատոմսերի շրջանառությունը երկրորդային շուկայում Պարտատոմսերի առուվաճառքի (այդ թվում նաև ռեպո/հակադարձ ռեպո) գործարքների իրականացումն է, ինչպես նաև Պարտատոմսերի ազատ առաքումը:

6.3 Երկրորդային շուկայում Պարտատոմսերի շրջանառությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության» կարգին համապատասխան:

6.4 Երկրորդային շուկայում առուվաճառքի գործարքների կատարումը դրամով հաշվարկների դեպքում իրականացվում է առաքում վճարման դիմաց սկզբունքով:

6.5 Ենթապահառուների կողմից հաշվառվող պարտատոմսերի և երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների վերաբերյալ Կենտրոնական բանկ է ներկայացվում հաշվետվություն:

## 7.ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԵՎ ՍԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին» կարգի համաձայն:

7.2 Պարտատոմսերի մարումը կատարվում է Թողարկողի կողմից սահմանված մարման օրը՝ մինչև ժամը 12<sup>30</sup>-ը:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգի»

Հավելված 1

**ԳԼՈՒԲԱԼ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ N \_\_**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ**

Մույն գլոբալ հավաստագիրը կազմված է Կենտրոնական բանկի պարտատոմսերի N \_\_\_\_\_ թողարկման ամբողջ ծավալի համար: Պարտատոմսերը թողարկվում են համաձայն «ՀՀ ԿԲ մասին» օրենքի: Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ հաստատվել են թողարկման հետևյալ հիմնական չափանիշները՝

- Պարտատոմսերի գրանցման համարը \_\_\_\_\_
- Թողարկման ծավալը \_\_\_\_\_ դրամ
- Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի օրը \_\_\_\_\_ թ.
- Պարտատոմսերի մարման օրը \_\_\_\_\_ թ.:

Պարտատոմսերի շրջանառությունն իրականացվում է համաձայն Կենտրոնական բանկի 2005թ. \_\_\_\_\_ - ի N \_\_\_\_\_ որոշմամբ հաստատված «ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգ»-ի:

**Կենտրոնական բանկի նախագահ** \_\_\_\_\_

քաղ. Երևան \_\_\_\_\_ թ.

Մարումը կատարվել է \_\_\_\_\_ թ.

**Կենտրոնական բանկի նախագահ** \_\_\_\_\_

քաղ. Երևան \_\_\_\_\_ թ.

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի  
կողմից թողարկվող կարճաժամկետ պետական  
պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման,  
շրջանառության և մարման սպասարկման կարգի»

Հավելված 2

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Պարտատոմսերի հերթական թողարկման մասին

Սույնով Թողարկողը տեղեկացնում է, որ «\_\_» \_\_\_\_\_ 200 թ. ժամը \_\_\_\_\_  
տեղի կունենա Կենտրոնական բանկի \_\_\_\_\_ թողարկման Պարտատոմսերի  
տեղաբաշխման աճուրդ. (թողարկման համարը)

Թողարկման ծավալը՝ \_\_\_\_\_ դրամ

Պարտատոմսերի մարման օրը՝ \_\_\_\_\_

Պարտատոմսի ձեռք բերման քայլը՝ \_\_\_\_\_ դրամ

Պարտատոմսի ձեռք բերման առաջարկության նվազագույն ծավալը՝ \_\_\_\_\_ դրամ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի  
կողմից թողարկվող կարճաժամկետ պետական  
պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շ  
շրջանառության և մարման սպասարկման կարգի»

Հավելված 3

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

— \_\_\_\_\_ Պարտատոմսերի աճուրդի արդյունքների վերաբերյալ

- աճուրդի անցկացման ամսաթիվը՝
- աճուրդին մասնակցած Դիլերների թիվը՝
- ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ)՝
- բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ)՝
- աճուրդի սահմանային եկամտաբերությունը՝
- աճուրդի միջին կշռված եկամտաբերությունը՝

Պարտատոմսերի թողարկման պետական գրանցման համարը

1. Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման պետական գրանցման համարը կազմված է տասներկու մասնիկից՝

$$X_1X_2 - X_3X_4X_5X_6X_7X_8X_9X_{10}X_{11} - X_{12}:$$

2. Առաջին երկու մասնիկները՝  $X_1X_2$  ցույց են տալիս երկրի կոդը՝ Հայաստանի Հանրապետություն (AM):

3. Երրորդ մասնիկը՝  $X_3$ , ցույց է տալիս տվյալ պարտատոմսը թողարկողին՝ ՀՀ կենտրոնական բանկ (C):

4. Չորրորդ, հինգերորդ և վեցերորդ մասնիկները՝  $X_4X_5X_6$ , ցույց են տալիս պարտատոմսերի տեսակը՝ պետական կարճաժամկետ պարտատոմսեր (B) և պարտատոմսերի ժամկետայնությունը շաբաթներով:

5.  $X_7X_8X_9X_{10}X_{11}$  մասնիկները ցույց են տալիս տվյալ պարտատոմսի մարման ժամկետը ( $X_7X_8$ օր/ $X_9$ ամիս/ $X_{10}X_{11}$ տարի): Ամիսները նշվում են թվերով, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսները՝ անգլերենի այբուբենի տառերով՝ համաձայն հետևյալ աղյուսակի.

|           |          |             |              |
|-----------|----------|-------------|--------------|
| հունվար-1 | ապրիլ-4  | հուլիս-7    | հոկտեմբեր-A  |
| փետրվար-2 | մայիս-5  | օգոստոս-8   | նոյեմբեր- B  |
| մարտ-3    | հունիս-6 | սեպտեմբեր-9 | դեկտեմբեր- C |

6. Վերջին մասնիկը՝  $X_{12}$  ստուգիչ նիշն է, որը հաշվարկվում է հետևյալ չորս հաջորդական քայլերով՝

6.1. Արժեթղթերի ծածկագրում տառային նիշերը փոխարինվում են համապատասխան թվերով՝ հետևյալ կարգով.

|     |      |      |      |      |      |
|-----|------|------|------|------|------|
| 0=0 | 6=6  | C=12 | I=18 | O=24 | U=30 |
| 1=1 | 7=7  | D=13 | J=19 | P=25 | V=31 |
| 2=2 | 8=8  | E=14 | K=20 | Q=26 | W=32 |
| 3=3 | 9=9  | F=15 | L=21 | R=27 | X=33 |
| 4=4 | A=10 | G=16 | M=22 | S=28 | Y=34 |
| 5=5 | B=11 | H=17 | N=23 | T=29 | Z=35 |

6.2. Ստացված շարքի յուրաքանչյուր թիվը բազմապատկվում է համապատասխան գործակցով: Ըարքի կենս դիրքերում գտնվող թվերի համար գործակիցը 2 է, զույգ դիրքերի դեպքում՝ 1: Ըարքում դիրքերի հաշվառումը կատարվում է աջից ձախ:

6.3. Նախորդ քայլում ստացված շարքի բոլոր թվերը գումարվում են:

6.4. Եթե հանրագումարի արդյունքում ստացված թիվը վերջանում է 0-ով, ապա ստուգիչ թիվը «0» է: Այլապես, ստուգիչ թիվը հաշվարկվում է երրորդ փուլում ստացված թիվը հանելով այդ թվից մեծ, սակայն 10-ի նվազագույն բազմապատիկը հանդիսացող թվից:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի  
կողմից թողարկվող կարճաժամկետ պետական  
պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման,  
շրջանառության և մարման սպասարկման կարգի»

Հավելված 5

ՀՀ կենտրոնական բանկ, Արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ

R101

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

\_\_\_\_\_ սեփական դեպո հաշիվներից

Դիլերի անվանումը

օր/ամիս/տարի դրությամբ

| Արժեթղթերի<br>գրանցման համարը | Թողարկման<br>ամսաթիվ | Մինչև մարումը<br>օրերի քանակը | Ազատ<br>արժեթղթերի ծավալը | Գրավադրված<br>արժեթղթերի ծավալը | Կալանված<br>արժեթղթերի ծավալը |
|-------------------------------|----------------------|-------------------------------|---------------------------|---------------------------------|-------------------------------|
|                               |                      |                               |                           |                                 |                               |
|                               |                      |                               |                           |                                 |                               |
|                               |                      |                               |                           |                                 |                               |

Ընդամենը՝

ՀՀ ԿԲ Բանկային գործառնությունների բաժնի պետ՝

\_\_\_\_\_

Պատասխանատու կատարող՝

\_\_\_\_\_

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգի»

Հավելված 6

### ԲԱՆԱԶԵՎ

**Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի տարեկան եկամտաբերության հաշվարկման**

$$(((U-ԳԳ)/ԳԳ)*360/O)*100\%$$

որտեղ՝

U-անվանական արժեք,

ԳԳ-գնման գին,

O-մինչև մարում օրերի քանակը,

360- տարվա օրերի թիվը՝ ընդունված պայմանականորեն:

**ԳԳ ≤ U**

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգի»

Հավելված 7

(Առաջնային տեղաբաշխման մասնակցության հայտ)

ՀՏ503

ԱՃՈՒՐԳԻ ՀԱՅՏ

|                            |         |
|----------------------------|---------|
| Գործառնության համար        | :20:    |
| Հայտի տեսակը               | :23:    |
| Հայտի համար/հերթական համար | :28:    |
| Արժեթղթի իդենտիֆիկատոր     | :35«Բ»: |
| Ծավալ                      | :35«Ա»: |
| Առաջարկվող գինը            | :37:    |

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի  
կողմից թողարկվող կարճաժամկետ պետական  
պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման,  
շրջանառության և մարման սպասարկման կարգի»  
Հավելված 8

ՀՀ կենտրոնական բանկ, արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգ

**ՔԱՂՎԱԾՔ ԴԵՊՈ ՀԱՇՎԻՑ**

|   |                          |                           |
|---|--------------------------|---------------------------|
| Համար   |                          |                           |
| Բանկ  | 10500 Պահառու            |                           |
| Հաշվետեր  |                          |                           |
| Դեպո հաշիվ  |                          |                           |
| Սկզբնական մնացորդ   | օր/ամիս/տարի             |                           |
| Դեպո հաշվի շարժ   | դեբետային շրջանառություն | կրեդիտային շրջանառություն |
| Վերջնական մնացորդ   |                          |                           |
| Ենթահաշիվ   | Սկզբնական մնացորդ        | Վերջնական մնացորդ         |
| Ընդամենը՝<br>Հաշվապահական ձևակերպման համար<br>Դրդապատճառ        | դեբետային շրջանառություն | կրեդիտային շրջանառություն |
| Գումար (Դ/Կ)<br>Թղթակցող հաշիվ                                  |                          |                           |
| օր/ամիս/տարի  |                          |                           |
| Ենթահաշիվ   | Սկզբնական մնացորդ        | Վերջնական մնացորդ         |
| Ընդամենը՝<br>Հաշվապահական ձևակերպման համար<br>Դրդապատճառ        | դեբետային շրջանառություն | կրեդիտային շրջանառություն |
| Գումար (Դ/Կ)<br>Թղթակցող հաշիվ                                  |                          |                           |
| օր/ամիս/տարի  |                          |                           |
| ՀՀ ԿԲ բանկային գործառնությունների բաժնի<br>պատասխանատու կատարող |                          |                           |

Կազմվել է օր/ամիս/տարի  
Ժամ:րոպե:վայրկյան

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգի»

N \_\_\_\_\_  
Դիլերի ծածկագիրը

Հավելված 9  
«\_» \_\_\_\_\_ 200 թ.

Հ Ա Յ Տ N\_\_

\_\_\_\_\_ թողարկման  
թողարկման համարը

**Պարտատոմսերի ձեռք բերման**

\_\_\_\_\_, *պատրաստակամություն է հայտնում*  
Դիլերի անվանումը

աճուրդի ժամանակ իր հաշվին գնել Պարտատոմսեր հետևյալ գներով՝

| <i>ՄՐՑԱԿՑԱՅԻՆ</i> |                                   |                                |
|-------------------|-----------------------------------|--------------------------------|
| <i>N</i>          | <i>Պարտատոմսերի ծավալը (դրամ)</i> | <i>Պարտատոմսերի գնման գինը</i> |
| 1                 |                                   |                                |
| 2                 |                                   |                                |
| 3                 |                                   |                                |
| 4                 |                                   |                                |
| 5                 |                                   |                                |
| 6                 |                                   |                                |
| 7                 |                                   |                                |
| 8                 |                                   |                                |
| 9                 |                                   |                                |
| 10                |                                   |                                |
| 11                |                                   |                                |
| 12                |                                   |                                |
| 13                |                                   |                                |
| 14                |                                   |                                |
| 15                |                                   |                                |
| 16                |                                   |                                |
| 17                |                                   |                                |
| 18                |                                   |                                |
| 19                |                                   |                                |
| 20                |                                   |                                |
| <i>Ընդ.</i>       |                                   |                                |

\_\_\_\_\_ Դիլեր

\_\_\_\_\_ գլխավոր հաշվապահ